դիւղերի եւ սպաննուած մարդերի վերջին հրծիւնը, հիւանդութիւնների ահաւոր խայթը, այրուող վէրքերի վրայ քսուած քացախը, նախճիրների եւ կոտորածների դժոխքը ու բերել էր նաեւ՝ տառապած մսերի վրայ դծած վերջին շապիկը, բախտաւոր օրերին գործուած թաշկինակը, պապերից մնացած արծաթէ զարդը, փախուստի խենթութեան վարկեանին առած, այժմ անկարեւոր, ձեռագործի մի կտորը, պատռուած խալիի մի մասը, ձեռագիր Աւետարանի մի էջը: Ու ահա, մենք ամէն ինչ մոռացած, մահը, սարսափը, քանդուած երկիրները, կանգ ենք առել ահաւոր վէրքերի վրայից պոկած զարդի առջեւ և հիանում ենք... Փնտրում ենք, թելերի հիւսքի մէջ, գոյների ներդաշնակութեան, գծերի կառուցուածքի, քանդակների միամտութեան մէջ՝ ցեղի ինքնայատուկ կնիքը, դարաւոր սրտի եւ մտայնութեան գոյացման ձեւը:

Ի՞նչ հանդիստ հանճար է հայ ժողովրդի հանճարը: Հաւասարակշռուած, պարզ, լուսաւոր, ժուժկալ: Համեմատում ենք, քննում, զննում՝ արիւնի ոչ մի հետք, ոչ մի ցնցող նըշան, այլ անդորրութիւն, միամտութիւն, յրսատակ արեւային պարզութիւն...

Ո՞ւր գնացին երէկուան տառապող ամբոխները, ո՞ր անդունդը կլանեց նրանց: Միլիոնաւոր մարդիկ անհետացան, ու մնաց՝ մի կտոր ձեռագործ, մի քիչ գոյն, մի քիչ նաղշ: Եւ սակայն, դարերով այդ նաղշերը պիտի ուսումնասիրեն, կոտրած պնակի կտորները պիտի վերլուծեն, մարած գոյների մէջ ցեղի դաղտնիքը պիտի որոնեն: Պատմութիւնը այն է՝ ինչ որ պատմութիւն չէ...

Գիշերը պառկեցինք պատրանքներով լեցուն, գոհ եւ վստահ: Ցեղը բացել էր իր սիրտը, ու նրա զարկերակը բաբախում էր մեր մատների տակ:

Ծանր լռութիւնը՝ ոչ մի ձայն ոչ մի տեղից՝ փակեց մեր կոպերը ու հանդիստ քնեցինք:

* * *

Լուսաբացի մօտ արդէն ոտքի էի: Արագ հագուեցայ եւ զգուշօրէն, ուրիշները չարթնացընելու համար, դուրս գնացի:

Կիսամութի մէջ, մայր եկեղեցին հսկայ ստուերի նման կանգնել է լոյսի հետ պայքարող անհանդիստ երկնքի տակ: Ամպերի միջից մի փունջ ճառագայթ էր իջել դմբէթի վրայ եւ դողահար պսպղում էր: Բակում ոչ ոք չկար: Վանականների շէնքի մի քանի պատուհաններում լոյս էր վառուած: Տպարանի կողմը բոլորովին մութ էր: Աւելի ձախ, մի հին շէնք, միջադարեան բերդի մնացորդի էր նմանում: Աչքս պահակ էր փնտռում: Բայց ոչ ոք չկար: Խոր այդ լռութիւնը, քնած դարերի բացուած այդ աչքերը, ստուերների կատարին բռնկող անսպասելի լոյսերը, յաւիտենականութեան գրկող շունչը, դեռնի մէջ մխրճուած անդորրութեան այդ կեցուածքը, մի տեսակ խորհրդաւոր վախ էր ազդում ինձ, սիրտս կլանում, մարմնիս վրայ սարսուռներ վազեցնում:

Ջանգակատան կողմում մարմարների անհանգիստ շողշողումներ էին նշմարւում: Ներքնախորը դեռ գիշեր էր: Ուղեցի մօտենալ: Ոտնաքայլերս հնչում էին չափազանց բարձր: Ձայները տարածւում էին ամբողջ բակում, բախւում պատերին, ստուերների մէջ խուլօրէն պայթում ու պատուհանների ապակիների սարսուռը արթնացնում:

Կանգ առի: Ամէն ինչ կարծես լռեց եւ, սակայն, կաթողիկոսների ծանր դերեզմանաքարերի ետեւից հաղիւ նշմարելի մի ձայն էր գալիս: Մի փսփսոց, թաքնուած մի հծծիւն, հեռաւոր եւ միեւնոյն ժամանակ մօտ: Ուշադրութիւն չդարձրի: Աւելի հետաքրքիր էր եկեղեցիի դմբէթը, որ մութի մէջ աքլորի ձայնի նման բարձրանում էր դէպի երկինք, պարզում իր հոյակապ ներդաշնակութիւնը, բաց անում երկրաչափական իր դէմքը, վառում իր խաչը ու անցնող ամպերին ցոյց տալիս իր տրամաբանական կառուցուածքը: Սակայն, լոյսը դմբէթի վրայից սահում էր վար, ջանգակատունը ամբողջովին ճառագայթում էր: Երկինքը բաց էր անում իր հովհարը: Վարը, սիւների տակ, մեծ դռան մօտ, շուքերը դեռ պայքարում էին լոյսի հետ, շարժւում դէս դէն, անկիւններին կառչում, պատի վրայից կախ գալիս, քարերի վրայ սողում:

Մինչ օրը իր թեւերը պատերին էր զարնում, քիչ առաջ լսած փսփսոցը աւելի սաստկացաւ եւ դռան մօտ մեծ մի ստուեր ծալուեց եւ վայր ընկաւ: Սարսափած մօտեցայ: Նաղաշ Յովնաթանի որմանկարների տակ, սիւների առջեւ չոքած, ցնցոտիների տակ դողալով,

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան